ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեբերի 2021 թվականի թիվ 382 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 245-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն, 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 245-Ն որոշումները և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի զեկուցագիրը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 245-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 527371.0 հազար դրամ գումարից 13984,570 հազար դրամը փոխանցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 8866,660 հազար դրամը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին 2021 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել որոշման կատարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

20 դեկտեմբերի 2021թ.
ք. Իջևան